

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու նպատակով մրցույթներ անցկացնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան քաղաքային համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ հետևյալ համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, բնակարանային ֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետ /ծածկագիր՝ 2.1-4/

Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է բաժնի աշխատանքները, իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է մասնագիտական ու կազմակերպչական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ, ապահովում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը, առաջարկություն է ներկայացնում Համայնքի ղեկավարին՝ ապօրինի հողօգտագործումները, ինքնակամ շինությունները կանխարգելիլու, կասեցնելու և վերացնելու, շինարարության /քանդման,/ թույլտվություն տալու վերաբերյալ: Կազմում է քաղաքի գլխավոր հատակագիծը, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին, ապահովում է համայնքի քաղաքաշինական կադաստրի վարումը, կազմում է համայնքի քաղաքաշինական կանոնադրության նախագիծը: Ապահովում է շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման, Համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ: Իրականացնում է իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

Բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստատժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստատժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստատժ կամ մինչև 2015թ. հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և /կամ/ համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստատժ, ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. Աշխատակազմի քաղաքաշինության, բնակարանային ֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-3)

Աշխատակազմի քաղաքաշինության, բնակարանային ֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Համայնքի քաղաքաշինական կադաստրի վարման աշխատանքներին, առաջարկություն է ներկայացնում կառուցապատողների, ճարտարապետահատակագծի առաջադրանք տալու վերաբերյալ, իրականացնում է սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, մասնակցում է շինարարության /քանդման/ թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու գործառույթների իրականացմանը, ինքնական շինությունների կանխարգելման, կասեցման աշխատանքներին և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Առնվազն միջնակարգ կրթություն, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթները կանցկացվեն 2014 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 10.00-ին ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի շենքում՝ ք Քաջարան, Լեռնագործների 4 հասցեում: Մրցույթներին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,


- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

- անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթներին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթներին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2014 թվականի հոկտյեմբերի 31-ը, մինչև ժամը 18.00-ը:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնների անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք Քաջարան, Լեռնագործների 4, հեռ.՝ 0285-32341, 0285-32181) կամ ՀՀ Սյունիքի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (հասցե՝ ՀՀ ք.Կապան, Գ.Նժդեհի 1. Հեռ.՝ 0285-23550):

Քաղաքապետ՝



Վ. Գևորգյան